Բյուջետային հատկացումներ

2016 թվականի 22.12.2016թ-ի դրությամբ մարզին 22 ծրագրերով պետբյուջեից ֆինասավորումը կատարվել է 2531670.0 հազար դրամ, որից 1897670.4 հազար դրամ ծախսվել է կրթության ոլորտում:
Մշակույթի ոլորտին հատկացվել է 20752.1 հազար դրամ, որից պետական աջակցության մշակութային միջոցառումների իրականացման համար հատկացվել է 3400.0 հազար դրամ: Մարզի 44 համայնքների բյուջեներին ամրագրված սեփական եկամուտների հավաքագրումը 22.12.206թ-ի դրությամբ կատարվել է 96.2 %-ով: ՀՀ 2016 թվականի 22.12.206թ-ի դրությամբ պետական բյուջեից համայնքների հատկացված դոտացիան եղել է 954159.8 հազ. Դրամ: Ֆինանսավորվել է 100 %-ով: ՀՀ Կառավարության որոշմամբ 2016 թվականիի ընթացքում փոխհատուցվել է մարզի սահմանամերձ Բարձրունի, Խաչիկ, Խնձորուտ, Նոր Ազնաբերդ և Սերս համայնքների էլեկտրաէներգիա սպառող բնակիչ-բաժանորդների կողմից հաշվարկային տարում գումարային մինչև 1440 կվտ/ժ էլեկտրաէնրգիայի քանակությունների համար 100% չափով: Քանզի նշված համայնքները գազաֆիկացված չեն, գազի գնի համար նախատեսված գումարը փոխանցվում է որպես էլ.էներգիայի վարձավճար, յուրաքանչյուր բաժանորդին փոխհատուցելով 180 խոր/մ ծախսած գազի համարժեք գումարի չափով: 2016թ-ի ընթացքում փոխհատուցվել է 27034.6 հազ. դրամ, բնական գազի և էլեկտրաէներգիայի գումար: Գույքահարկի և հողի հարկի փոխհատուցման նպատակով հատկացվել է 3154.9 հազ. դրամ, որը ֆինանսավորվել 100%-ով:

Կրթություն

Վայոց ձորի մարզում գործում է 50 հանրակրթական դպրոց, այդ թվում 14 հիմնական և 36 միջնակարգ, որոնցից 2-ը վարժարան: 2 ավագ դպրոց և 1 կրթահամալիր գործում են ՀՀ ԿԳ նախարարության ենթակայությամբ: 5 դպրոցներ գտնվում են սահմանամերձ գյուղերում, որոնցում սովորում է 317 աշակերտ: 5 դպրոցներ գտնվում են բարձր լեռնային բնակավայրերում: Մարզում գործում է տարածաշրջանային պետական քոլեջ և Տնտեսագիտական համալսարանի Եղեգնաձորի մասնաճյուղը:

- Մինչև 50 աշակերտ ունեցող դպրոցների թիվը – 17, որտեղ սովորող աշակերտների թիվը 393 - է:
- 50-100 աշակերտ ունեցող դպրոցների թիվը – 12, որտեղ սովորողների թիվը 849 – է:
- 100 և ավելի աշակերտ ունեցող դպրոցների թիվը – 21

Համայնքների ղեկավարների, մարզային վիճակագրական ծառայությունների և ՔԿԱԳ-ի բաժինների հետ համագործակցելով տարվել է դպրոցահասակ երեխաների հաշվառում: Հանրակրթությունից դուրս մնացած երեխաներ չկան: Կրթության վարչությունը սերտորեն համագործակցում է իրավապահ մարմինների, մարզպետարանի կանանց, ընտանիքի և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի հետ: Կատարված աշխատանքի արդյունքում խիստ նվազել է անչափահասների կողմից կատարվող իրավախախտումները: Ոստիկանության կողմից հաշվառման վերցված երեխաներ չկան:
Մարզի 50 դպրոցներում 2016-2017 ուստարում սովորում է 6322 աշակերտ, որից 685-ը ավագ դպրոցներում և կրթահամալիրում: Առաջին դասարան են ընդունվել 633

երեխա: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 88 դպրոցահասակ երեխաներ ներառական կրթության ծրագրով ընդգրկված են Եղեգնաձորի թիվ 2, Ջերմուկի թիվ 1, Վայքի հիմնական և Ջերմուկի թիվ 3, Շատինի և Արենիի միջն. դպրոցներում, որտեղ ստեղծված են անհրաժեշտ պայմաններ այդ երեխաների կրթական կարիքներն ապահովելու համար:
Բացվել և գործում են 24 նախակրթարաններ, որոնցից 14-ը դպրոցներում: Դպրոցներում գործող նախակրթարաններում ընդգրկվել է 165 երեխա:
Դպրոցներում աշխատում են 973 ուսուցիչներ, որոնցից 851-ը ունեն բարձրագույն մանկավարժական, կամ բարձրագույն կրթություն (մոտ 87%-ը), մնացած 122-ը՝ միջնակարգ մասնագիտական:

- ՈՒսուցիչ / աշակերտ հարաբերակցությունը կազմում է 1:6,4:
- Դասարանի միջին խտությունը 14,8 - է:
- Ուսուցչի միջին ծանրաբեռնվածությունը կազմում է շաբաթական 17 ժամ:
- Մարզում գործում է 17 մանկապարտեզ 44 խմբով, որոնցում ընդգրկված է 1044 նախադպրոցական տարիքի երեխա: Նրանց հետ աշխատում են 85 դաստիարակներ:
- Խմբի միջին խտությունը կազմում է 23:
- Դաստիարակ / երեխա հարաբերակցությունը կազմում է 1:12

Սահմանված կարգով ձևավորվել են հանրակրթական ուսումնական հաստատությունների նոր կառավարման խորհուրդներ, որոնց անվանական կազմը 2016թ. մարտի 4-ին հաստատվել է Վայոց ձորի մարզպետի N 26 որոշմամբ:
Հաջողությամբ իրականացվում է <<Կայուն դպրոցական սնունդ>> ծրագիրը: Մարզի բոլոր հանրակրթական դպրոցների 1-4 րդ դասարանների 2348 երեխաներ դպրոցում ստանում են սնունդ:
Սահմանված կարգով կազմակերպվում են դպրոցներում ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթները: ՈՒստարվա ընթացքում անցկացվել է ուսուցչի թափուր տեղի համար 23 մրցույթ:
ԴՏՀՏՇՀ-ի կողմից մարզի 1-ին և 2-րդ դասարանների 1189 աշակերտների հատկացվել են ուսումնական պլանշետներ: Դրանց օգտագործման նպատակով վերապատրաստվել են 1-ին և 2-րդ դասարաններում պարապող բոլոր դասվարները:

Մարզի հանրակրթական դպրոցների մեծ մասը՝ մոտ 80%, վերանորոգված են:
Բոլոր դպրոցներում լուծված է ջեռուցման խնդիրը: 19 դպրոցներ ջեռուցվում են գազի լոկալ կաթսայատան միջոցով, մնացածը՝ էլեկտրական ջեռուցիչներով: Մարզի բոլոր դպրոցները ապահովված են համակարգիչներով, գործում է ինտերնետ կապը:
Ներդրվել և աշխատում է Dasaran.am ծրագիրը, ըստ որի մուտքագրվում են ուսուցման ցուցանիշները:
Ամբողջությամբ լուծված է աշակերտների դասագրքերով ապահովվածության խնդիրը, վարձավճարները հավաքագրվել են 99%: Դպրոցներում հաջողությամբ ներդրվել է շախմատ առարկան, բոլոր դպրոցները ապահովված են անհրաժեշտ գույքով և դասագրքերով: Մարզի քաղաքային 5 դպրոցներում ներդրվել է <<Ազգային երգ ու պար>> առարկան:
Սահմանված կարգով անցկացվել է տարվա լավագույն <<ուսուցիչ>>, <<տնօրեն>>, <<դաստիարակ>> մրցույթները:

Ամեն տարի փետրվար-մարտ ամիսներին անցկացվում են դպրոցականների առարկայական օլիմպիադայի դպրոցական և մարզային փուլերը 16 առարկաներից:

Այս ուստարում նրանցից 52-ը մասնակցել են հանրապետական փուլին, որոնցից 11-ը արժանացել են դպիպլոմների և գովասանագրերի:

Դպրոցներում սահմանված կարգով անցկացվել են 9-րդ և 12-րդ դասարանների ավարտական քննությունները: Մարզային ենթակայության դպրոցներում 9-րդ դասարանն ավարտել են 424, իսկ 12-րդ դասարանը 360 շրջանավարտներ:

Անցկացվել է հերթական ատեստավորման համար 115 ուսուցիչների վերապատրաստման դասընթացները որոնք կազմակերպվել են Կրթության ազգային ինստիտուտի Վայոց ձորի մասնաճյուղում:

Մարզի 8 դպրոցներում ինֆորմացիոն տեխնոլոգիաների միության կողմից ներդրվել են ռոբոտաշինության լաբորատորիաներ, որը մեծ խթան կարող է հանդիսանալ աշակերտների տեսական գիտելիքների ստեղծագործական կիրառման ուղղությամբ:

ՀՀ կառավարության և Վայոց ձորի մարզպետարանի աջակցությամբ մարզի սոցիալապես անապահով, բազմազավակ, զոհված զինծառայողների ընտանիքների 195 դպրոցահասակ երեխաներ հանգստացել են Հանքավանի <<Հասմիկ>> ճամբարում:

Մարզի դպրոցներում բարձր հիմքերի վրա է ռազմահայրենասիրական դաստիարակության դրվածքը: Բոլոր դպրոցներն ապահովված են ուսումնական զենքով: Կրակային պատրաստության համար սահմանված գրաֆիկով մարզում տեղակայված զորավարժարանում աշակերտների համար անցկացվել է հրաձգություն ավտոմատ զինատեսակից:

Մ Պ Ո Ր Տ

Մարզում գործում է 4 մանկապատանեկան մարզադպրոց (Եղեգնաձոր, Վայք, Ջերմուկ, Մալիշկա)՝ բոլորն էլ համայնքային ենթակայության: Մարզի 50 դպրոցներից 11-ում չկան մարզադահլիճներ: Մարզադպրոցներն ու հանրակրթական բոլոր դպրոցներն ունեն մարզագույքի կարիք:

Մ Շ Ա Կ Ո Ւ Յ Թ

Մարզում կա 36 մշակույթի տուն, մեկը մարզային ենթակայության, 35-ը համայնքային ենթակայության, որոնք խիստ վերանորոգման կարիք ունեն:

Մարզում կա 41 գրադարան, Եղեգնաձորի մարզային գրադարանը մշակույթի նախարարության ենթակայության է, վերանորոգված է: Մնացած բոլոր համայնքային գրադարանները խիստ վերանորոգման կարիք ունեն: Գործում են երաժշտական, արվեստի և գեղարվեստի 6 դպրոցներ, որոնցից 1-ը մարզային ենթակայության, մնացածը՝ համայնքային: Գործում է 3 թանգարան (<<Գլաձոր>>, Մոմիկի անվան, և Եղեգնաձորի երկրագիտական): Մարզի տարածքում հաշվառված են 1380 պատմա-մշակութային հուշարձաններ:

Առողջապահություն

-Մարզային առողջապահական հաստատությունների ֆինանսավորման համար 2016թ.-ի հատկացվել է 607 496.2 հազար դրամ: Մատուցվել է 38 699.7 հազար դրամի վճարովի բժշկական ծառայություններ:
-2016թ. «Վայքի բուժական միավորում» ՓԲԸ-ում սկսել է գործել հեմոդիալիզի բաժանմունքը, որը սպասարկում է մարզի 9 բնակչի:
- 2016թ. հունիսի 13-ից 25-ը իրականացվել է Հայկական ակնաբուժության նախագծի (ՀԱՆ) և Ucom ընկերության կողմից համատեղ իրականացվող «Լույս հայի աչքերին» 2016 թվականի ծրագիրը: Մարզի բուժհաստատությունների ակնաբույժների կողմից 2016թ.-ին իրականացվել են շուրջ 1000 մեծահասակի և 810 երեխայի ակնային զննում: Ակնային զննում անցածներից 133-ը ծրագրի շրջանակում ենթարկվել են վիրահատության, իսկ 38-ը՝ լազերային միջամտության: ՀՀ Վայոց ձորի մարզպետի միջամտությամբ ծրագրի շրջանակում վիրահատության են ենթարկվել նաև մարզի սոցիալապես անապահով ընտանիքների ևս 15 բնակիչ:
- 2016թ.-ին պետական պատվերով բուժման և հետազոտման համար մարզպետի միջնորդագրով հանրապետության բուժհաստատություններ պետական պատվերով բուժման և հետազոտման են ուղեգրվել 30 քաղաքացի,
- պետական պատվերով բուժման համար 6 քաղաքացի մարզպետի կողմից ուղեգրվել են մարզի բուժհաստատություններ:
- Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում առողջարանային վերականգնողական բուժման են ուղեգրվել 60 մեծահասակ և 4 երեխա:
- 2016 թ. 11 ամիսների ընթացքում զագսի տվյալներով հաշվառվել է 587 ծնունդ, 2015 թ. 11-ին ամիսների համեմատ նվազել է 9-ով: Մահերի թիվը 2016թ. 11 –ի ամիսների ընթացքում կազմում է 444, 2015 թ. 11-ին ամիսների համեմատ նվազել է 87-ով:

Սոցիալական ապահովության բնագավառ

Ձեռնարկվել է համապատասխան միջոցառումներ նպաստի համակարգին պետական բյուջեից հատկացվող միջոցների հասցեականության պահպանման և նպատակային օգտագործման ուղղությամբ: Արդյունքում Հանրապետությունում նպաստառու ընտանիքների միջին թիվը կազմել է 13.4%, իսկ մարզում 11.4%: Վայոց ձորի մարզի սոցիալական ապահովության տարածքային գործակալությունները ստացել են 1188 DVB-T2 ստանդարտի թվային հեռուստատեսային ընդունիչ սարքեր, որից 1071-ը տրվել է 2015 թ. դեկտեմբերի 1-ի դրությամբ ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված, 30.85 և ավելի կամ միայն անաշխատունակ անդամներ ունեցող 0-ից բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքներին և 117-ը ՀՀ սահմանների պաշտպանության ժամանակ զոհված զինվորական ծառայողների ընտանիքներին:

-Մարզում գրանցված են 10409 կենսաթոշակառուներ, որից
Հաշմանդամներ՝ 4360, տարիքային և այլ կենսաթոշակառուներ 5863
Տարեկան վճարվում է շուրջ 4972մլն դրամ կենսաթոշակ
Նպաստի համակարգում փաստագրվել են 3876 ընտանիքներ, նպաստառու է դարձել 2021 ընտանիք, 11 ամիսների ընթացքում վճարվել է 633 մլն դրամ նպաստ,
Դրամական օգնություն է ստացել 165ընտանիք,
11 ամիսների ընթացքում վճարվել է 20 մլն դրամ դրամական օգնություն,

Ավանդների փոխհատուցման համար գրանցված 276 քաղաքացիներից փոխհատուցում է ստացել 254 մարդ: Զբաղվածության տարածքային գործակալություններում գրանցվել է 1510 գործազուրկ, որից 242-ը տեղավորվել է աշխատանքի:

Ճանապարհաշինություն

2016 թ. ընթացքում իրականացվել է 139.9կմ մարզային նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանման աշխատանքներ, իսկ 37.5 կմ ընթացիկ պահպանման աշխատանքներ:

ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության պատվիրատվությամբ հիմանորոգվել է Չիվա-Ռինդ մարզային (տեղական) նշանակության ավտոճանապարհի 2.2 կմ հատվածը՝ 204 մլն դրամի չափով, Արենի- Խաչիկ ավտոճանապարհի 3 ոլորանները՝ (կմ1+500, կմ5+600, կմ11+200)- 79 մլն դրամի չափով, Մ2 Երևան- Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման ավտոճանապարհի կմ 159+200 հատվածի կամրուջը ՝ 23.8 մլն դրամի չափով, Գնդեվազ բնակավայրի ներհամայնքային փողոցները՝ 88,9 մլն դրամի չափով, վերնորոգվել է Ջերմուկ քաղաքի գործարանային փողոցը և հարակից մայթերը ՝ 59.9 մլն դրամի չափով և բարեկարգվել է Վարդահովիտի ներհամայնքային փողոցները՝ 15 մլն դրամի չափով(տրվել է սուբվենցիա Վարդահովիտի համայնքին):

Քաղաքաշինություն

2016թ-ի ընթացքում ՀՀ պետական բյուջեի միջոցներով մարզպետարանի պատվիրատվությամբ կատարվել է 130.187 մլն. դրամի շին.մոնտաժային աշխատանքներ Ջերմուկ քաղաքի Արփա գետի կիրճի հետիոտն ճեմուղու վերակառուցում և բարեկարգում: Աշխատանքներն ավարտված են :

ՀՀ պետական բյուջեի միջոցներով Վայքի քաղաքապետարանի պատվիրատվությամբ իրականացվել է՝

«Արևիկ» մարզադաշտի հիմնանորոգում - 60.0 մլն. դրամ (ավարտված է):

Մարզադաշտին կից այգու բարեկարգում - 60.0 մլն. դրամ (ավարտված է): **Ընդ՝ 250.187 մլն. դրամ:**

Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ԾԻԳ պետական հիմնարկության միջոցներով իրականացվել է՝

1. Մալիշկա համայնքի գազաֆիկացման ընդլայնում- 55.0 մլն. դրամ (ավարտված է):
2. Արենի համայնքի ոռոգման ջրագծի վերակառուցում- 74.23 մլն. դրամ (ավարտված է):
3. Վերնաշեն համայնքի ոռոգման ջրագծի վերակառուցում- 31.300 մլն. դրամ (ավարտ. է):
4. Գետափ համայնքի ոռոգման ջրագծի վերակառուցում- 95.27 մլն. դրամ (ավարտված է):
5. Ելփին համայնքի ոռոգման ջրագծի վերակառուցում- 76.500 մլն. դրամ (ավարտված է):

6. Արին համայնքի ոռոգման ջրագծի վերակառուցում- 99.400 մլն. դրամ (ավարտված է):
7. Ազատեկ համայնքի ոռոգման ջրագծի վերակառուցում- 190.030 մլն. դրամ (ավարտված է):
8. Ազատեկ համայնքի խմելու ջրագծի վերանորոգում- 187.5 մլն. դրամ (ընթացքի մեջ է):
9. Ռինդ համայնքի խմելու ջրագծի կառուցում- 310.62 մլն. դրամ (ավարտված է):
10. Ռինդ համայնքի ոռոգման ջրագծի կառուցում - 38.0 մլն. դրամ (ավարտված է):
11. Հերհեր համայնքի խմելու ջրագծի վերակառուցում - 336.0 մլն. դրամ (ավարտված է) :
12. Գոմքում խմելու ջրագծի վերակառուցում- 64.0 մլն. դրամ (ավարտվ): **Ընդ՝ 1557.85 մլն. դր:**

Գյուղ նախարարության ՇԻԳ ՊՀ-ի միջոցներով իրականացվել է՝

Աղնջաձոր համայնքի արոտավայրերում ջրաբիացման համակարգի կառուցում- 42.400 մլն. դրամ- (ավարտված է) : Ռինդ համայնքի արոտավայրերում ջրաբիացման համակարգի կառուցում- 64.0մլն. դրամ - (ավարտված է): **Ընդամենը – 106.4 մլն. դրամ:**

Վերջին օրերի սրբեր բարեգործական կորպորացիայի միջոցներով իրականացվել է՝

Ռինդ համայնքի խմելու ջրագծի վերանորոգում- 6.396 մլն. դրամ (ավարտված է):

Խնձորուտում խմելու ջրագծի վերանորոգում- 3.956 մլն. դրամ (ավարտված է): **Ընդ՝ 10.352 մլն. դրամ:**

«Ֆուլեր տնաշինական կենտրոն» ԲՀԿ-ի միջոցներով իրականացվել է՝

Շատին համայնքի արոտավայրերում խմոցի տեղադրում- 14.01 մլն. դրամ (ավարտված է):

Թառաթումբ համայնքի արոտավայրերում խմոցի տեղադրում- 9.131 մլն. դրամ (ավարտված է):

Հորս համայնքի արոտավայրերում խմոցի տեղադրում- 9.144 մլն. դրամ (ավարտված է):

Քարագլուխ համայնքի արոտավայրերում խմոցի տեղադրում- 12.57 մլն. դրամ (ավարտված է):

Գնդեվազ համայնքում կաթի հավաքման կետ – 14.323 մլն. դրամ (ավարտված է) :

Մարտիրոս համայնքի արոտավայրերում «Արաքսի ազբյուր», «Սալեր», «Կնյազի աղբյուր», «Խարաբաներ» անասունների ջրախմոցների կառուցում – 11.337 մլն. դրամ (ավարտված է) :

Սերս համայնքում անասունների ջրախմոցների կառուցում – 7.661 մլն. դրամ (ավարտված է) :

Գոմք համայնքում անասունների ջրախմոցների կառուցում – 8.846 մլն. դրամ (ավարտված է) :

Զառիթափ համայնքում կաթի հավաքման կետի լրաց աշխատանք – 6.5 մլն. դրամ (ավարտված է) :

Կեչուտ համայնքում անասունների ջրախմոցների կառուցում – 9.778 մլն. դրամ (ավարտված է) :

Սարավան համայնքում անասունների ջրախմոցների կառուցում – 8.644 մլն. դրամ (ավարտված է) :

Արտավան համայնքում անասունների ջրախմոցների կառուցում – 12.39 մլն. դրամ (ավարտված է) :

Չիվա համայնքում 2 հաց և կացեր – 7.458 մլն. դրամ (ավարտված է) :

Աղավնաձոր համայնքում ոռոգման ջրագծի կառուցում – 20.570 մլն. դրամ (ավարտված է) :

Աղավնաձորում չրի արտադրամասի կառուցում՝ 4.984մլն. դր. (ավարտված է) :**Ընդ՝ 157.346մլն. դրամ:**

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի միջոցներով իրականացվել է՝

Զառիթափ համայնքի մանկապարտեզի շենքի հիմնանորոգում- 145.0 մլն. դրամ (ավարտված է) :

Համայնքային բյուջեի միջոցներով իրականացվել է՝

Գնդեվազ համայնքում ոռոգման ջրագծի վերակառուցում- 120.5 մլն. դրամ (ավարտված է) :

Գոմք համայնքի անասունների համար բակատեղերի կառուցում – 1.86 մլն. դրամ (ավարտված է) :

Գետափ համայնքում հենապատի կառուցում – 0.96 մլն. դրամ (ավարտված է) :

Գետափ համայնքում գազիֆիկացմ ընդլայնում-2.3 մլն. դրամ (ավարտված է): **Ընդ՝ – 125.62 մլն. դրամ:**

Բնության համաշխարային հիմնադրամի Հայաստանյան մասնաճյուղի միջոցներով իրականացվել է՝

Եղեգնաձոր քաղաքի այցելությունների կենտրոնի կառուցում – 32.447 մլն. դրամ (ավարտված է):

Գետափում մրգի արևային չորանոցի կառուցում -20.0մլն. դրամ (ավարտված է): **Ընդ՝ 52.447 մլն. դրամ:**

«ՕՔՍՖԱՄ» - ի միջոցներով

Գնիշիկ համայնքում ոռոգման ջրագծի կառուցում – 18.0 մլն. դրամ (ավարտված է):

Ասիական զարգացման բանկի միջոցներով իրականացվել է՝

Ջերմուկ քաղաքի ջրամատակարարման բարելավման աշխատանքները – 31.0 մլն. դրամ:

Զառիթափում ջրամատակարարման բարելավման աշխատանքներ-36.5մլն. դրամ: **Ընդ՝67.5մլն. դրամ:**

«Հաբիթաթ Ֆոր Հյումենիթի» Արմենիա հիմնադրամի միջոցներով իրականացվել է՝

Վայք քաղաքի 5 բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգման և էներգաարդյունավետության բարելավմ. միջոցառումների իրականացում՝ 22.419 մլն. դրամ:

Գյուղատնտեսություն /առ 19.12.2016թ/

Մարզում գյուղատնտեսության զարգացման նպատակով 2016 թվականին պետական աջակցության ծրագրերով շուկայականից ցածր գներով մարզի հողօգտագործողներին հատկացվել է 459.85տ /55 182 000դրամ/ ազոտական, 5.75տ /805 000դրամ/ կալիումական, 4.0տ /560 000 դրամ/ ֆոսֆորակաո պարարտանյութեր, 64150լ /17 962 000 դրամ/ դիզելային վառելանյութ, 81տ /10 530 000դրամ/գարնանացան գարու, 0.5տ /750 000դրամ/ առվույտի և 104տ աշնանացան ցորենի սերմացուներ: Աշնանացան ցորենի դիմաց վճարման ենթակա 16 640 000 դրամից վճարվել է 11 702 140 դրամ, պարտքը կազմում է 4 937 860 դրամ:

2017 գյուղատնտեսական աշխատանքների համար պարարտանյութերի անհրաժեշտ քանակության մասին ներկայացվել է գյուղատնտեսության նախարարություն.Ազոտական պարարտանյութ 541.5տ /+81.65/, Կալիումական պարարտանյութ 6.95տ /+1.15/, Ֆոսֆորական պարարտանյութ 7.76տ /+3.76/

Ձմռան և վաղ գարնանային ցրտահարությունների պատճառով վնասվել են մարզի խաղողի ու պտղատու այգիները, վնասը կազմել է 1 301 000 000 դրամ: Գործող 6 հակակարկտային կայանները բավարար չեն կարկտահարության դեմ պայքարի համար, անհրաժեշտ են ևս 20 կայաններ կարկտահարության վնասները մեղմելու նպատակով:

2016 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ ACBA-CREDIT AGRIKOLE բանկի միջոցով մարզի 814 գյուղացիական տնտեսություններին տրվել է շուրջ 651 600 000 դրամ սուբսիդավորված վարկեր 14% տոկոսադրույքով, որից 6%-ը սուբսիդավորվել է պետության կողմից, 154 տնտեսությունների տրվել է 126 640 000 դրամ գյուղացիական վարկ 13.5-20% տոկոսադրուիքով և 142 գյուղացիական տնտեսությունների տրվել է 315 170 դոլար վարկ 14-24% տոկոսադրույքով: 2016 հունվարի 1-ի դրությամբ մարզում առկա է 25026 գլուխ խոշոր եղջերավոր անասուն/+2448/, որից կովեր՝ 9861 /+218/ գլուխ, մանր եղջերավոր՝ 21691 (-3133), խոզեր՝ 2627 գլուխ (+578), թռչուններ՝ 116557 թև (-22882) և մեղվաընտանիք՝ 22570/+715/ փեթակ:

Ոռոգման սեզոնի ընթացքում ջուրօգտագործողներին է տրվել 9143 հազ. խմ ոռոգման ջուր , որի հասույթը կազմել է 100 573 000դրամ, գանձվել է 99 994 000դրամ, որը կազմում է հասույթի 99 %ը:

Եղեգնաձորի պահածոների գործարանի արտադրական հզորությունները թույլ են տալիս տարեկան մթերել շուրջ 1600տ. պտուղ-բանջարեղեն, որը կարող է լրացուցիչ խթան հանդիսանալ գյուղացիական տնտեսությունների կողմից արտադրված պտղի և բանջարեղենի իրացումը արդյունավետ և ժամանակին կազմակերպելու ուղղությամբ:Վերջինիս կողմից մթերվել է 38 տոննա պտուղ, 582 տոննա բանջարեղեն, իսկ

արտադրված 1978 տոննա խաղողից, վերամշակող ձեռնարկությունների կողմից մթերվել է 1604 տոննա:

Վարչության կողմից սահմանված ժամկետներում համակարգվել է պետական պատվերով նախատեսված ախտորոշիչ և կանխարգելիչ բոլոր միջոցառումները:

Անասնաբուժության ռազմավարական զարգացման շվեցարական գրասենյակի կողմից մարզի Բարձրունի, Մարտիրոս, Խնձորուտ,Հերհեր, Գնդեվազ, Կեչուտ, Զառիթափ, Ազատեկ,Գետափ, Արտաբույնք, Խաչիկ, Ռինդ, Ելփին, Շատին համայնքներում ստեղծվել են անասնաբուժական կետեր, ամեն կետի համար գնվել է մեկ միլիոն դրամի դեղորայք և գործիքներ, և 300 000 դրամի գույք: Ընթացքի մեջ է Ելփին, Վայք,Գնդեվազ և Գլաձոր համայնքներում Արհեստական սերմնավորման կետերի կազմավորումը: Գրասենյակի կողմից իրականացվում է նաև **համակարգչային ուսուցում համայնքներին** ծրագիրը Կեչուտ, Գնիշիկ, Աղնջաձոր և Վարդահովիտ համայնքներում: Գյուղապետարանների աշխատակիցներին ուսուցումն ավարտելուց հետո կտրամադրվեն համակարգիչներ: 2016թ.մարզի ընդհանուր ցանքային տարածությունը կազմել է 6851 հա, որը նախորդ տարվա համեմատ ավել է 1138 հա-ով, /աղյուսակ 1/

N	ԱՆՎԱՆՈՒՄԸ	Տարածությունը / հա			Համախառն բերքը / տ /		
		2015թ	2016թ	Տարբ.	2015թ	2016թ	տարբ
1	Հացահատիկև հատիկաընեղեն	3258	3984	726	6665	12192	5527
2	Բանջարեղեն	495	661	166	9403	13580	4177
3	Բոստան	38	50	12	816	982	166
4	Կարտոֆիլ	200	289	89	3739	6225	2486
5	Պտուղ, հատապտուղ	1966	1684.6	-281	8440	4976	-3464
6	Խաղող	816.3	862.8	46.5	5708	1978	-3730
7	Խոտ				30671	34783	4112
8	Ընդ.ցանքատարածություն	5713	6851	1138			
9	Կաթ տ.				25500		
10	Միս տ.				6300		

11	Ձու մլն. հատ				20.9		
	Համախառն արտադրանքը մլրդ. դրամ				21.4		

Մարզում «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագրի շրջանակներում ընդգրկվել են Աղնջաձոր, Ռինդ, Վերնաշեն, Զառիթափ Սարավան, Կարմրաշեն, Շատին, Արտաբույնք համայնքները, ծրագրի միջոցով Աղնջաձոր և Կարմրաշեն համայնքները ձեռք են բերել մեկական ՄՏԶ-82 տրակտոր,իրենց գյուղ գործիքներով /20% համայնքի միջոցներով/ :Ընդհանուր առմամբ կատարվել են 7.74մլն դրամի շինարարական աշխատանքներ:

Մարզում առկա է 424 միավոր գյուղ տեխնիկա, որից սարքին ՝ 301-ը, 71 վարի տրակտոր, 23 կոմբայն : 2014-2016թթ ձեռք է բերվել 11 միավոր գյուղ տեխնիկա, 18 միավոր գյուղ. գործիքներ: **Բույսերի պաշտպանության** ծրագրով ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից անվճար մարզին հատկացված 38կգ ռոդիֆակում թունանյութ մկնանման կրծողների դեմ պայքարի աշխատանքներ իրականացնելու նպատակով:

ՏԻ և ՀԳՄ ոլորտ

Հաշվետու ժամանակաշրջանում համագործակցված աշխատանքներ են տարվել հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների հետ, ապահովվել է մարզի կապի, էներգետիկայի, հարկային, արտակարգ իրավիճակների, զինկոմիսարիատների, ոստիկանության հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների համագործակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների հետ :

Նախապատրաստվել է ՀՀ Վայոց ձորի մարզպետի՝ Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի համայնքներում 2016 թվականին բնակավայրերի սանիտարական մաքրման, ծառատնկման և կանաչապատման միամսյակ անցկացնելու մասին որոշման նախագիծ, որը հաստատվել է 01.04.2016 թվականին մարզպետի N 32 որոշմամբ:

ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 6-ի թիվ 214-Ա որոշման համաձայն համայնքներին տրամադրվել է տեղեկատվություն 2015 թվականի երկրորդ կիսամյակում և 2016 թվականի 1-ին կիսամյակում ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության բնակչության պետական ռեգիստրում հաշվառված և հաշվառումից հանված քաղաքացիների տվյալների վերաբերյալ:

ՀՀ կառավարության 2009 թվականի մայիսի 21-թիվ 562-Ն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված թիվ 2 հավելվածով ՀՀ մարզպետների կողմից կատարած

աշխատանքների վերաբերյալ ներկայացվել է տեղեկատվություն համապատասխան պետական մարմիններ:

«Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 35.2-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի համաձայն և ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի կողմից հաստատված տարեկան ծրագրին համապատասխան 2016 թվականին ՀՀ Վայոց ձորի մարզի Գետափի, Աղավնաձորի, Շատինի, Ելփինի, Արփիի և Արտաբույնքի համայնքապետարանների աշխատակազմերի կադրային գործի վարման նկատմամբ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության կողմից իրականացված վերահսկողության արդյունքում հայտնաբերվել են թերություններ ու բացթողումներ <<Տեղական ինքնակառավարման և Համայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենքների պահանջների կատարման ուղղությամբ :

2016 թվականի ընթացքում կազմակերպվել են քննարկումներ բացահայտված թերությունների վերացման կապակցությամբ . ցուցաբերվել է մեթոդական, խորհրդատվական օգնություն: Ձեռնարկված միջոցների արդյունքում նշված թերությունները վերացվել են: ՀՀ Վայոց ձորի մարզպետի 25.11.2016 թվականի թիվ 01/08.1/7488-16 գրությամբ թերությունների վերացման վերաբերյալ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն է ներկայացվել տեղեկատվություն:

2016 թվականի ընթացքում 20 համայնքային ծառայողներ վերապատրաստվել են, 8-ը՝ ատեստավորվել են, համայնքային ծառայության 2 թափուր պաշտոնների համար հայտարարվել են մրցույթներ: 2016 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ մարզում համայնքային ծառայության պաշտոնների թիվը 165 է:

Մարզի 29 համայնքներից 21-ում ներդրված է ՀԿՏՀ (Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգ), 13 համայնքներում գործում են պաշտոնական կայքեր:

Ընդունվել է միգրացիայի հետ խնդիր ունեցուղ 27 քաղաքացու դիմում, որոնց սահմանված կարգով տրվել է ընթացք: ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության միգրացիոն պետական ծառայության կողմից ստացվել է 37 քաղաքացու դիմումի պատասխան:

Համակարգվել են տեղական ինքնակառավարման մարմինների կողմից կատարված աշխատանքները: ՏԻՄ օրենքի պահանջների կատարման նպատակով աշխատանքներ են տարվել ավագանու նիստերի հրավիրման ժամկետների պահպանման, ընդունված որոշումները օրենքով սահմանված ժամկետում մարզպետարան ներկայացնելու, որոշումները ՀՀ օրենսդրությանը համապատասխանեցնելու, ընդունված իրավական ակտերի և բյուջեների հրապարակայնության ապահովման ուղղությամբ: Հաշվետու ժամանակաշրջանում համակարգվել են ՏԻՄ-երում հանրային սննդի, առևտրի և սպասարկման բնագավառներում կազմակերպվող աշխատանքները, որոնց արդյունքների վերաբերյալ տարածքային կառավարման նախարարություն ներկայացվել են կիսամյակային հաշվետվություններ: Համակարգվել է ՀՀ Սահմանադրությանը և ընթացիկ օրենսդրությանը հակասող մարզի ՏԻՄ-երի կողմից ընդունված որոշումները մարզպետի պահանջով վերանայելու գործընթացը, համայնքային բյուջեների կատարման ընթացքի վերաբերյալ համայնքների ղեկավարների կողմից ավագանուն տրված եռամսյակային հաղորդումների և

տարեկան հաշվետվությունների տրման աշխատանքները, ինչպես նաև համայնքների ղեկավարների կողմից 2015 թվականի կատարած աշխատանքների վերաբերյալ տրված հաշվետվությունների գործընթացները:

Հետևողական աշխատանքներ են տարվել համայնքներում ՏԻՄ-երի գործունեության հրապարակայնության ապահովման ուղղությամբ: Այդ նպատակով մարզի բոլոր համայնքներում տեղադրված ցուցատախտակների միջոցով համայքների ազգաբնակչությունը իրազեկվում է համապատասխան տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության վերաբերյալ, ինչպես նաև, աշխատնքներ են տարվել համայնքների ավագանիների դերակատարության ու պատասխանատվության բարձրացման ուղղությամբ: Համայնքների ղեկավարների և ավագանիների կողմից կազմակերպվել են քաղաքացիների ընդունելություն և հանդիպումներ բնակչության հետ: Համայնքներում իրականացված միջոցառումների վերաբերյալ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն է ներկայացվել եռամսյակային և կիսամյակային հաշվետվություններ:

Համաձայն ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 29.12.2015 թվականի թիվ 1381-Ա հրամանով հաստատված աշխատանքային ծրագրի և ՀՀ Վայոց ձորի մարզպետի 01.02.2016 թ. թիվ 6 որոշման պահանջների 2016 թ. ընթացքում վարչական հսկողություն է իրականացվել ՀՀ Վայոց ձորի մարզի Փոռի, Ազատեկի, Զառիթափի, Գոմքի, Աղավնաձորի, Չիվայի, Խաչիկի, Նոր Ազնաբերդի, Գլաձորի, Կարմրաշենի, Ագարակաձորի, Գնիշիկի, Գողթանիկի, Հերմոնի և Աղնջաձորի համայնքներում: Իրականացված վարչական հսկողության արդյունքում հայտնաբերված թերությունների վերաբերյալ կազմվել են արձանագրություններ: Հսկողության ժամանակ արձանագրվել են թերություններ և բացթողումներ <<Տեղական ինքնակառավարման մասին>>, <<Համայնքային ծառայության մասին>> , <<Իրավական ակտերի մասին>>, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>>, <<Թափոնների մասին>>, <<Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին>>, <<Քաղաքացիական պաշտպանության մասին>>, <<Քաղաքաշինության մասին>> ՀՀ օրենքների պահանջների կատարման ուղղությամբ: Թերությունների և բացթողումների վերաբերյալ կազմվել են ակտեր, թերությունների վերացման վերաբերյալ սահմանվել են ժամկետներ: Կազմված արձանագրությունները և հայտնաբերված խախտումները սահմանված ժամկետում ներկայացվել են ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն և տեղադրվել մարզպետարանի կայքում:

Վարչությունը համագործակցված աշխատանքներ է տարել ՏԻՄ ընտրությունների կազմակերպման ուղղությամբ: Համակարգվել է 2016 թվականի ապրիլի 17-ին Գետափի համայնքի ղեկավարի և հոկտեմբերի 2-ին մարզի 24 համայնքներում համայնքների ղեկավարների և ավագանու անդամների ընտրությունների գործընթացը:

Մեթոդական օգնություն է ցուցաբերվել մարզի համայնքներին՝ զարգացման ծրագրերի կազմման գործընթացի կապակցությամբ: Վարչությունը ապահովել է մարզի ՏԻՄ-երի և մարզպետարանի աշխատակազմի փոխհարաբերությունները՝կազմակերպվել են խորհրդակցություններ, համակարգվել է ՀԳՄ տարածքային ծառայությունների գործունեությունը:

Կազմակերպվել են մարզպետի այցելություններ մարզի համայնքներ: Համակարգվել են այցելությունների ընթացքում բարձրացված խնդիրների կարգավորման աշխատանքները: 2016 թվականի ընթացքում ՀՀ Վայոց ձորի մարզի բնակիչներից ստացել ենք 32 դիմում բողոք, բոլոր դիմումներին տրվել է ընթացք սահմանված կարգով: 2016 թվականի ընթացքում Տի և ՀԳՄ հարցերով վարչությունը պատասխանել է 981 գրության:

Հողաշինության և հողօգտագործման բնագավառ

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի մարզային հողային պետական տեսչության կողմից առ 20 դեկտեմբերի 2016 թվականի կատարված աշխատանքների մասին

Հաշվետու ժամանակաշրջանում կազմվել է մարզի հողային հաշվեկշիռը, ըստ որի մարզի վարչական տարածքը կազմում է 230783.0 հա, որից գյուղ. նշանակության հողեր՝ 190314.2 հա, այդ թվում վարելահող՝ 15942.6 հա, բազմամյա տնկարքներ՝ 1684.6 հա, խոտհարքներ՝ 5014.3 հա, արոտ՝ 92275.2 հա, այլ հողատեսքեր 75397.6հա:

Միջգերատեսչական հանձնաժողովին է ներկայացվել 24 համայնքների վարչական սահմաններում գտնվող հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներում փոփոխություններ կատարելու 30 առաջարկություններ, որից 27-ին միջգերատեսչական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն՝ հողերի նպատակային նշանակությունը փոխելու վերաբերյալ, որոնք սահմանված կարգով փոխանցվել են համապատասխան համայնքներ, մնացած 3-ը ընթացքի մեջ են: Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 30 հուլիսի 1998 թվականի թիվ 479 որոշմամբ սահմանված 3-րդ կետի՝ Աղավնաձորի, Աղնջաձորի և Շատինի համայնքներում կատարվել են հողամասերի գործառնական նշանակության փոփոխություններ:

ՀՀ կառավարության հունվարի 14-ի 2010 թվականի թիվ 16-Ն որոշմամբ հաստատված 4-րդ կետի պահանջներին համապատասխան՝ 2 հողամասերի օտարման և 1 հողամասերի կառուցապատման առաջարկություն է ներկայացվել ՀՀՏԿ և զարգացման նախարարություն, որից 1-ի վերաբերյալ ստացել ենք դրական եզրակացություն, մնացած 2-ը ընթացքի մեջ են:

Համաձայն ՀՀ կառավարության 17.09.2009թ. թիվ 1066-Ն որոշմամբ Գնիշիկի, Գետափի, Ռինդի, Ազավնաձորի, Վերնաշենի, Արփիի, Գնդեվազի և Ազատեկի համայնքներում բաժնի հետևողական աշխատանքների արդյունքում կատարվել են համայնքային և քաղաքացիների

սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի փոփոխություն՝ ցածրաժեքից՝ բարձրարժեքի՝ փոփոխության են ներկայացվել 217.1 հա ,որից փոփոխվել է խաղողի այգի 104.8 հա, պտղատու այգի 112.3 հա իսկ Զառիթափի 0.25հա, Թառափումբի 20.1հա և Ազարակաձորի 55.33հա գյուղատնտեսական նշանակության հողատեսքերը փոխադրվել են բարձրարժեքից – ցածրարժեքի, որոնք էլ արտացոլվել են մարզի 2016թվականի հողային հաշվեկշռում: ՀՀ հողային օրենսգրքի 42-րդ հոդվածի համաձայն, մարզպետի կարգադրությամբ տեսչական ստուգումներ են կատարվել մարզի 15 համայնքներում: Ուսումնասիրությունների արդյունքում մի շարք համայնքներում հայտնաբերվել են հետևյալ թերությունները՝ օտարվող հողամասերի չափերը պակաս են եղել նվազագույն չափերից, օտարման արձանագրությունները կազմվել են ոչ ճիշտ, պայմանագրերը ժամանակին չեն ներկայացվել պետական գրանցման: Մարզպետի մոտ քննարկման ժամանակ համապատասխան համայնքների ղեկավարներին առաջարկվել է կարճ ժամկետում նշված թերությունները վերացնել:

Համայնքների կողմից հողերի օտարման և վարձակալությամբ տրամադրման աշխատանքները իրականացվել են՝ ՀՀ հողային օրենսգրքի պահանջներին համապատասխան: Համայնքների վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողերից օտարվել է 53.5578 հա, որի ընդհանուր գումարը կազմում է 13748927.6 դրամ, որը հիմնականում ծախսվել է կապիտալ ակտիվների ձեռքբերման և շենքեր-շինությունների վերանորոգման համար:

Մարզի հողերի օգտագործման մակարդակը դեռևս բավարար չէ, որի հիմնական պատճառներն են՝ վարելահողերի 78 % -ը անջրդի են, հողերը բնական ցածր բերրիություն ունեն, բնակավայրերից հեռու են գտնվում: Քաղաքացիների կողմից ստացվել է 25 դիմումներ, որոնք ուսումնասիրվել և սահմանված կարգով պատասխան է տրվել :

Արդյունաբերություն

2016թ. 10 ամիսների ընթացքում Վայոց ձորի մարզում, ըստ կազմակերպություններից ստացված հաշվետվությունների տվյալների, ինչպես նաև վիճակագրական մոնիտորինգում չընդգրկված տնտեսավարող փոքր ձեռնարկատիրության սուբյեկտների գործունեության գնահատման (ընթացիկ գներով) թողարկվել է 14.9 մլրդ. դրամի արդյունաբերական արտադրանք, իրացվել է 15.1 մլրդ. դրամի արտադրանք, աճը նախորդ տարվա համեմատ կազմել է 0.1 % :

-Հիմնականում աճը ապահովվել է էլ էներգիայի, հանքային ջրերի, խմիչքների և հանքաարդյունաբերության ծավալների աճով:

Մարզպետարանը մարզի գործարարներին, ձեռներեցներին աջակցել է թողարկվող արտադրանքի գովազդման, հանրապետական և միջազգային ցուցահանդեսներում նրանց մասնակցության ապահովման ուղղությամբ:

-Մարզում գործարարության աշխուժացման նպատակով ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի մշտական ուշադրության կենտրոնում է գտնվում բազմակողմանի համագործակցային հարաբերությունների զարգացումն ու խորացումը հետևյալ պետությունների հետ՝ Իրանի Իսլամական Հանրապետության (ՈՒրմիա նահանգ), ՌԴ (Նիժնի-Նովգորոդի, Արխանգելսկի մարզ), Բելոռուսիայի Հանրապետության (Մինսկի մարզ):

Զբոսաշրջություն

Զբոսաշրջությունը Վայոց ձորի տնտեսության առավել դինամիկ զարգացող ոլորտներից մեկն է և հայտարարված է տնտեսության գերակա ճյուղ: Մարզում առկա է 1320 պատմամշակութային հուշարձաններ՝ տարածված 29 համայնքներում: Վայոց ձորի մարզում կարելի է առաջադրել զբոսաշրջության հետևյալ ուղղությունները՝ էկոտուրիզմ, գիտական տուրիզմ, բնական տուրիզմ, արկածային տուրիզմ (ժայռամագլցումներ. անձավագիտական տուրեր, լեռնային և հետիոտն երթեր, ձիավորություն լեռնային տարածքներով, կանյոնինգ, ձկնորսություն), պատմամշակութային տուրիզմ:

2015 թվականի առաջին 10 ամիսների համեմատ 2016 թվականի նույն ժամանակահատվածում մարզ ժամանած զբոսաշրջիկների թիվն ավելացել է 105-ով կամ 0.13%-ով:

Աուդիտի բաժին

Վայոց ձորի մարզպետարանի ներքին աուդիտի 2016թ.-ի տարեկան հաստատված ծրագրի շրջանակներում ներքին աուդիտի բաժնի կողմից նախատեսվել և իրականացվել է 36 միավոր

աուդիտ, որից 19 միավոր մարզային ենթակայության հանրակրթական ՊՈԱԿ-ներում, 1 միավոր << Եղեգնաձորի երկրագիտական թանգարան>>ՊՈԱԿ-ում, 5 միավոր մարզային ենթակայության առողջապահական ՊՈԱԿ-ներում,3 միավոր մարզային ենթակայության առողջապահական ՓԲԸ-ներում, 3 միավոր մշակույթային միջոցառումների,4 միավոր մարզպետարանի գնումների գործընթացի,1 միավոր մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական վարչությունում :ՊՈԱԿ-ներում,ՓԲԸ-ներում,մշակույթային միջոցառումների մասով իրականացվել է ֆինանսական աուդիտ ,մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական վարչությունում և գնումների գործընթացի գնումների օրենսդրությանը համապատասխանության աուդիտ ՝ գործունեության ոլորտը կարգավորող օրենքներին և այլ իրավական ակտերին համապատասխանության աուդիտ:

Նշված ՊՈԱԿ-ներում,ՓԲԸ-ում, մշակույթային միջոցառումների մասով, մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական վարչությունում և գնումների գործընթացի մասով աուդիտի ստանդարտների համաձայն, այդ թվում բավարար տեղեկությունների փաստաթղթային ստացման հիման վրա, փաստացի իրականացվել է աուդիտ և կազմվել աուդիտի հաշվետվություն: Հաշվետվությունները ներառել են աուդիտի ընդհանուր նկարագիրը, գտնվելու վայրը, գործունեության իրավական հիմքերը, գործունեության շրջանակները, խնդիրները, աուդիտի արդյունքները, եզրահանգումները, առաջարկությունները, հանձնարարականները :Իրականացվել են ֆինանսական հաշվետվություններում, ֆինանսական բնույթի տեղեկություններում արտահայտված տվյալների արժանահավատության գնահատում, ֆինանսական գործառույթների առանձին տեսակների օրինականության ստուգում, հաշվապահական հաշվառման գրանցումներում արտացոլված տվյալների արժանահավատության գնահատում: Աուդիտի ընթացքում աուդիտի են ենթարկվել ֆինանսական կառավարմանը, ներքին հսկողությանը,գործունեության իրավական ակտերին համապատասխանությանն առնչվող բոլոր գործառույթները: Հրավիրվել է Ներքին աուդիտի կոմիտեի 9 նիստ, քննարկվել են աուդիտի հաշվետվությունները, կայացվել համապատասխան որոշումներ: Աուդիտի ենթարկված ՊՈԱԿ-ների,առողջապահական ՓԲԸ-ի և մարզպետարանի համապատասխան ստորաբաժանման ղեկավարներին տրվել են հանձնարարականներ,ներկայացվել առաջարկություններ արձանագրված թերությունների և խախտումների վերացման ուղղությամբ:Միաժամանակ այդ ուղղությամբ ներքին աուդիտի բաժնի կողմից իրականացվել է խորհրդատվություն և վերահսկողության գործընթաց:

Աուդիտի հաշվետվությունները տեղադրվել են ՀՀ ՎԶՄ պաշտոնական կայքում (vdzor.mtad.am):

Ներքին աուդիտի բաժնի կողմից ամբողջությամբ կատարվել է 2016 թ.-ի ներքին աուդիտի տարեկան ծրագիրը: Հաշվետվությունները, համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 17.02.2012թ.-ի թիվ 143-Ն հրամանի, ծրագրային մուտքագրմամբ, ներքին աուդիտի միասնական կառավարման տեղեկատվական համակարգի միջոցով ներկայացվել են ՀՀ ֆինանսների նախարարություն:

Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտ

Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտ

Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի աշխատանքների կազմակերպման կարևորագույն նախապայմանը ոլորտի տեղեկատվական շտեմարանի թարմացումն է: Այն իրականացվում է յուրաքանչյուր տարվա սկզբին: Ուսումնասիրության և համայնքներում գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների հետ համատեղ աշխատանքի արդյունքում 2016 թվականի ընթացքում կատարվել է մարզի կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 36 երեխայի կարիքի գնահատում, նրանց վերաբերյալ տեղեկատվությունը գրանցվել է <<Նորք>> տեղեկատվական կենտրոնում: Ըստ ուսումնասիրության՝ մարզում 2016 թվականին հաշվառված է 118 հաշմանդամ երեխա, որից Եղեգնաձորում՝ 75, Վայքում՝ 30, Ջերմուկում՝ 13-ը: Մարզում հաշվառված է միակողմանի ծնողազուրկ 147 երեխա:

<< Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին>> ՀՀ օրենքի պահանջների համաձայն Երևանի բժշկահոգեբանամանկավարժական կենտրոնի եզրակացության և մարզպետարանի վկայագրման հիման վրա 2016 թ. վկայագրվել և վերավկայագրվել է 68 երեխա:

Մարզի տարածքում հաշվետու ժամանակաշրջանում կենտրոնացված հաշվառման է վերցվել տարբեր պատճառներով առանց ծնողական խնամքի մնացած 5 երեխա, սոցիալապես անապահով 2 երեխա ուղղորդվել է ՀՕՖ-ի երեխայի աջակցության կենտրոն, մանկուց հաշմանդամ մեկ երեխա ուղեգրվել է <<Գյումրիի երեխաների տուն>>, կենսաբանական ընտանիք է վերադարձել 2-ը: Բաժնի աջակցության շնորհիվ գիշերօթիկ հաստատության 2 աշակերտի տրամադրվել է ամառային հանգստի ուղեգիր:

Ոստիկանության տարածքային բաժինների անչափահասների գործերով զբաղվող ծառայությունների հետ համագործակցության արդյունքում մարզում անչափահասների իրավախախտման դեպքերը կրճատվել են՝ 2016 թվականի ընթացքում պրոֆիլակտիկ քարտային հաշվառման մեջ գտնվող 4 անչափահաս դուրս է եկել հաշվառումից: Անչափահասների իրավունքների պաշտպանության նպատակով բաժինը մասնակցել է բոլոր իրավախախտների գործերի հարցաքննությանը: ՀՀ Ոստիկանության պետի 2013թ. նոյեմբերի 7-ի №3837 – Ա հրամանով ստեղծված միջգերատեսչական աշխատանքային խմբի հետ մուրացկանության և թափառաշրջիկության, անչափահասների թրաֆիկինգի խնդիրների կանխարգելման և իրազեկման նպատակով իրականացվել են հանդիպումներ, զրույցներ մարզի ուսումնական հաստատություններում, առողջապահական հիմնարկներում և համայնքներում: Մարզում չկան մուրացիկ և թափառաշրջիկ, շահագործման (թրաֆիկինգի) ենթարկված երեխաներ: Բաժինը յուրաքանչյուր եռամսյակը մեկ մասնակցում է ՀՀ Ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչությունում կայացող միջգրատեսչական աշխատանքային խմբի նիստին:

Համայնքներ է ուղարկվել շրջաբերական նամակ՝ մարզում ծննդի պետական գրանցում չունեցող երեխաներին բացահայտելու համար: Բաժնի աջակցությամբ երկու երեխա ստացել է ծննդյան վկայական:

Տնային այցելությունների, համայնքներում գործող խնամակալության և հոգաբարձության մարմինների հետ համատեղ աշխատանքների շնորհիվ մարզի 42 ընտանիքների տրվել է խորհրդատվական, դրամական և նյութական աջակցություն մարզպետարանի, մարզային և միջազգային հասարակական կազմակերպությունների, անհատ անձանց կողմից:

Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինը կոորդինացնում է գենդերային հիմնահարցերով զբաղվող մշտական հանձնաժողովի աշխատանքները՝ տարվա ընթացքում հրավիրել է 4 նիստ:

Բաժինը սերտորեն համագործակցել է երեխաների իրավունքների պաշտպանության և կանանց հիմնախնդիրներով զբաղվող մարզային և միջազգային հասարակական կառույցների («Շուշան», «Երիտասարդ ընտանիքի աջակցության կենտրոն», «Սոցիալ-հոգեբանական հետազոտությունների և վիճակագրության կենտրոն», «ՀՕՄ»-ի Եղեգնաձորի մասնաճյուղ, <<Երեխաների պաշտպանության ցանց >>, <<Մարդկային զարգացման միջազգային կենտրոն>>, <<ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ>>, <<Սեյվ դը չիլդրեն>>) հետ, մասնակցել նրանց կազմակերպած հանդիպումներին, աջակցել մարզում իրականացվող ծրագրերի ներդրմանն ու կլոր սեղանների անցկացմանը: Միայն <<Դիակոնիա>> բարեգործական հիմնադրամը մարզի սոցիալապես անապահով 250 ընտանիքների օգնել է սննդամթերքով:

2016թ. ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների բաժինը մասնակցել է Վայոց ձորի մարզի 15 համայնքների վարչական հսկողության աշխատանքներին, ժամանակին և սահմանված կարգով քաղաքացիներից ստացած 27 դիմումների տվել համապատասխան լուծում:

Իրավաբանական բաժին

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժինը 2016թ. 11 ամիսների ընթացքում հետևել է մարզի ավագանիների և համայնքի ղեկավարների որոշումների համապատասխանությանը ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին: Նշված ժամանակահատվածում մարզի ավագանիների կողմից ընդունվել է 1472 որոշում, որոնք հիմնականում վերաբերվում են համայնքների բյուջեների ընդունմանը, դրանցում կատարված գումարային և հոդվածային վերաբաշխումներին, համայնքի ղեկավարի աշխատակազմի թվաքանակի, հաստիքացուցակի, դրույքաչափերի հաստատմանը, համայնքի սեփականություն հանդիսացող հողերի օտարմանը համաձայնություն տալուն և ներհամայնքային այլ խնդիրների: Անհամապատասխանությունների և թերությունների հայտնաբերման դեպքում որոշումները վերադարձվել են համայնք՝ համապատասխան ուղղումների, որոնք սահմանված կարգով ուղղվել և վերադարձվել են մարզպետարան: Մասնավորապես նշված ժամանակահատվածում բաժնի կողմից խմբագրման են վերադարձվել Փոռ, Զառիթափ, Խաչիկ, Աղնջաձոր, Ազատեկ, Արտաբույնք, Չիվա, Արենի,

Արտավան, Վայք, Թառաթումբ, Գնդեվազ, Մարտիրոս, Զեղեա, Հերհեր, Շատին, Վերնաշեն համայնքների ավագանիների որոշումները: Պատասխանվել է չորս քաղաքացու դիմումի, որոնցում բարձրացված հարցերը վերաբերվում էին անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցմանը, արհեստակցական միության կողմից իր լիազորությունների իրականացմանը, ժառանգական և աշխատանքային իրավահարաբերությունների: Դիմումներին պատասխանվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներից ելնելով: Կիսամյակի ընթացքում տրվել են բանավոր խորհրդատվություններ՝ ինչպես քաղաքացիների, այնպես էլ համայնքի ղեկավարների աշխատակազմերի աշխատակիցների:

Բաժնեմասն առանձնացնելու և դրա վրա բռնագանձում տարածելու պահանջով բաժնի կողմից հայց է ներկայացվել ՀՀ Արարատի Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարան:

Պետական բյուջեին վերականգման ենթակա գումարի բռնագանձման համար դիմում է ներկայացվել ՀՀ Արարատի և Վայոց ձորի ընդհանուր իրավասության դատարանին՝ <<Սերգեյ գրուպ>> ՍՊԸ-ի սնանկության գործով պարտատերերի ցանկում ՀՀ Վայոց ձորի մարզպետարանին ներառելու վերաբերյալ: Մարզպետարանը, ըստ սնանկության գործով կառավարիչ Վ. Ասատրյանի գրության (մտից համար՝ 28.10.2016թ., թիվ 5269), ներառվել է ընկերության պարտատերերի ցուցակում:

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի գեոդեզիայի և հողային պետական տեսչության 2015թ. դեկտեմբերի 21-ի թիվ 10 ակտի հիման վրա վարչական վարույթներ են հարուցվել մարզի 11 համայնքների ղեկավարների նկատմամբ հողօգտագործման ոլորտում հայտնաբերված խախտումների հետ կապված: Եղեգնաձոր, Եղեգիս, Արփի, Արին համայնքների ղեկավարների նկատմամբ հարուցված վարույթները կարճվել են վարչական իրավախախտման կազմի բացակայության հիմքով: Ջերմուկ, Արենի, Գնդեվազ, Չիվա, Հերմոն, Գետափ, Զառիթափ համայնքների ղեկավարները 2016թ. փետրվարի 17-ին տեղի ունեցած վարչական վարույթի արդյունքում ենթարկվել են վարչական պատասխանատվության:

Ամենամսյա տեղեկատվություն է ներկայացվել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարություն՝ մարզի համայքների ավագանիների կողմից ընդունված որոշումների վերաբերյալ:

Բաժնի պետը, որպես աուդիտի կոմիտեի անդամ, մասնակցել է ներքին աուդիտի բաժնի կողմից մարզի հանրակրթական հաստատություններում, առողջապահական հիմնարկներում և մարզպետարանի աշխատակազմում իրականացված աուդիտի արդյունքների քննարկմանը՝ աուդիտի կոմիտեի նիստերի ընթացքում, ներկայացրել համապատասխան դիտողություններ և առաջարկություններ: Աուդիտի արդյունքում կարգապահական պատասխանատվության են ենթարկվել Չիվայի, Թառաթումբի միջնակարգ դպրոցների տնօրենները:

Բաժնի կողմից մշակվել է <<Գնդեվազի համայնքի վարչական սահմաններում որոշ տարածքներում բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին>> ՀՀ կառավարության 2016թ. մայիսի 19-ի թիվ 519-Ն որոշման նախագիծը:

Բաժնի կողմից մշակվել է <<ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի ենթակայության տակ գտնվող պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների գործադիր մարմինների ընտրության (նշանակման) մրցույթի անցկացման ընթացակարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի 2007 թվականի փետրվարի 5-ի թիվ 20-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> մարզպետի 2016թ. մայիսի 19-ի թիվ 40-Ն որոշումը, որը ներկայացվել է ՀՀ արդարադատության նախարարության իրավական ակտերի փորձաքննության գործակալություն իրավական փորձաքննության և պետական գրանցման համար:

Մասնակցել ենք Փոռ, Ազատեկ, Զառիթափ, Գոմք, Աղավնաձոր, Չիվա, Խաչիկ, Նոր Ազնաբերդ, Գլաձոր, Կարմրաշեն, Ազարակաձոր, Գնիշիկ, Գողթանիկ, Հերմոն և Աղնջաձոր համայնքներում իրականացված վարչական հսկողությանը:

Մարզի ավագանիների որոշումները բաժնի կողմից տեղադրվում են ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի պաշտոնական կայքում:

Մշակվել և մարզի ինը համայնքների են տրամադրվել անլար Wifi երթուղիչ սարքերի նվիրաբերության պայմանագրերը:

ՀՀ քննչական կոմիտեի Վայոց ձորի մարզային քննչական վարչության պետի միջնորդագրի հիման վրա կազմակերպվել է քննարկում մարզպետարանի համապատասխան աշխատակիցների և դպրոցների տնօրենների հետ:

Պատասխանվել են տարբեր պետական մարմինների և այլ կազմակերպությունների կողմից ստացված գրություններին, ընթացիկ գրություններին և դիմումներին պատշաճ պատասխանելու համար հարցումներ են կատարվել ՀՀ մշակույթի, կրթության և գիտության նախարարություններին, պետական ռեգիստրի գործակալությանը:

Հանրային իրազեկում

Տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի բաժինը 2016 թվականի հունիսի 28-ին կազմակերպել է ՀՀ Վայոց ձորի մարզպետի ասուլիսը, նվիրված 2016 թվականի 1-ին կիսամյակի արդյունքների ամփոփմանը:

2016 թվականի ընթացքում ՀՀ Վայոց ձորի մարզպետի և մարզպետարանի աշխատանքային գործունեության հանրային իրազեկումը մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի բաժնը կազմակերպել է մարզպետարանի պաշտոնական կայքի միջոցով՝ <<Նորություններ>> բաժնում տեղադրելով 332 լուսաբանական նյութ և սպասարկելով կայքի 23 բաժինների 127 ենթաբաժինները:

Կայքի <<Տեղեկատվության ազատություն և դիմեք մեզ>> բաժնում ստեղծել նոր ենթաբաժին << ՏԱ մասին >> ՀՀ օրենք, 7-րդ հոդված՝ Տեղեկությունների մատչելիության և հրապարակայնության ապահովումը>> վերնագրով, որում կիրառվել է հանրությանը տեղեկությունների տրամադրման ավելի արդյունավետ ձև: Նշված նորարարական տարբերակի գործադրման համար ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի պաշտոնական ինտերնետային կայքը՝ http://vdzor.mtad.am/ Ինֆորմացիայի ազատության կենտրոնի կողմից ճանաչվել է 2016 թվականին տեղեկատվության տրամադրման լավագույն ինտերնետային պաշտոնական կայք:

Դեկտեմբեր ամսին կայքում ավելացվել է նոր բաժին <<Առցանց հեռարձակումներ>> վերնագրով, որի միջոցով նախատեսվում է ուղիղ հեռարձակումներ իրականանել մարզի 10 հազար բնակիչ ունեցող համայնքների ավագանու նիստերը: